ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մելիքյան,

ի պատասխան Ձեր 12.08.2025թ. հ. 189-2025թ. գրության՝ տեղեկացնում եմ.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 140 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետարանի և «ԺԻԼՅՈ» ԱԿ-Ի միջև 06.02.2023թ.-ին կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/13 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակում: Պայմանագրային արժեքը՝ 176,088,190.92 ՀՀ դրամ: Կապալառու կազմակերպությանը մինչ սույն թվականի օգոստոս ամիսը կատարված աշխատանքի համար վճարվել է 159,026,991 ՀՀ դրամ: Շինարարական աշխատանքների երկարաձգման պատճառներն եղել են առաջացած տեխնիկական խնդիրները, որոնց կարգավորման նպատակով նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և աշխատանքները վերսկսվել են:

Ինչ վերաբերում է ապաստարաններին, ապա նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ժամանակ, եթե շենքային պայմանները թույլ են տալիս, ապա դրանք նախատեսվում են իրավական ակտերի պահանջներին համաձայն: Այնուհետև, փաթեթը ուղարկվում է պարզ և համալիր փորձաքննությունների: Համալիր փորձաքննութան շրջանակում նախագիծն ուղարկվում է ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչություն և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին: Որևէ թերության առկայության /նաև ապաստարանի բացակայության/ դեպքում համալիր փորձաքննությունը չի ստանում դրական եզրակացություն: Նոր նախագծվող մանկապարտեզներում, որոնք նոր են կառուցվում, ապաստարանները նախատեսվում են: Ներկայումս վարչության աշխատանքային ծրագրով իրականացվում են թվով 15 մանկապարտեզի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ:

Գրությամբ պահանջվող ավելի համապարփակ տեղեկատվություն հնարավոր է ստանալ հետևյալ հղումով՝ https://armeps.am/ppcm/public/contracts:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ